

Տ Օ Ն Օ Ր Ե Ր Ի Ն

ՎԱՃԱՌԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԴԵԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԵՍԻՆ:

Բաղմաթիւ անվճիռ մնացած հարցեր կան, որոնցից մանք մեր բարոյական—հասարակական բարեկարգութեան են վերաբերում և առանց վերջնական որոշում ստանալու՝ անցնում են հին տարուց դէպի նորը. այդպիսի հարցերի թուիցն է և տօն օրերին վաճառականութիւն գաղարեցնելը:

Ի բայ առեալ նիւթական շահերը թանկ գնահատող յայտնի նիւթ սալաշտները, բոլոր բարեպաշտ քրիստոնեաների խիղճը տանջվում և սիրտը խռովում է, երբ տեսնում են, որ Աստծուն նուիրուած օրերը դարձնում են աշխատանքի և որ առաւել վատթար է՝ հարբեցողութեան և անառակութեան օրեր: Ի հարկէ կասեն մեզ, որ մենք եկեղեցւոյ սղասաւորներս պարտաւոր ենք ժողովրդին հասկացնել, որ նոքա տէրունական տօները վայելուչ կերպով անցկացնեն: Այդ նկատողութիւնը իրաւացի է. բայց մեր կողմից անիրաւացի չի լինիլ ասել, որ մենք չենք կարող վաճառականների գործակատարներին ստիպել՝ եկեղեցական արարողութիւններին ներկայ գտնուելու համար փակել խանութները և վաճառականութեան վերաբերեալ միւս հաստատութիւնները. քանի որ նոքա իրենց տիրոջ հրամանն են կատարում: Մենք չենք կարող համոզել և գիւղացիներին, որ նոքա տօն օրերին եկեղեցի գնան, քանի որ համաշխարհային տօնավաճառները նոյա հրապուրում են դէպի հրապարակները և վաճառատները, իսկ յետոյ դէպի խմիչքեղէնի հաստատութիւնները: Մենք կարող ենք ուրախանալ, որ այս դէպքում մեզ օգնութեան կը հասնեն քաղաքներում և գիւղերում կարգապահութեան վերայ հսկող հասարակական ժողովները, որ նոքա մեր համոզեցուցիչ խօսքին կը միացնեն իրենց իշխանական կարգադրութիւնները: Բայց, աւաղ, տօներին վաճառականութիւնը գաղարեցնելու հարցը նոքա իրենց ձեռքն առնելով՝ շատ տարիների ընթացքում ոչ միայն չեն վճռել այդ

Հարցը, այլ և եկեղեցական քարոզների գէամ արգելքներ են դնում իրենց որոշմամբ օրինական ձև տալով տօն օրերի այս կամ այն ժամերի և երբեմն ամբողջ օրուայ վաճառականութեան: Այսպիսով զանազան տեղերում Հարցի վճիռը միայն բարդուեց և փոփոխութեան ենթարկուեց և անհնարին եղաւ վճռել առանց բարձրագոյն իշխանութեան հրամանի:

Մենք պարտականութիւն ենք զգում ցոյց տալ, թէ ինչ պատճառով այդ Հարցի վերաբերմամբ եղած բոլոր հասարակական որոշումները ևս չեն օգնում մինչև իսկ մայրաքաղաքներից մէկի խորհրդի բարի օրինակը և դորան խրախուսող կայսերական կարգադրութիւնը չը կարողացան Առևտստանի ոչ մի քաղաքում գործը առաջ տանել: Սորա պատճառը ի՞նչ է:

Մենք կը պատասխանենք, որ գլխաւոր պատճառը Հարցը սխալ կերպով հասկանալն է:

Աստուածային կամքը վճռել, ճիշտ կերպով որոշել և անպայման քարոզել է, որ վաճառականութիւնը և ամեն տեսակ աշխատանքները տօն օրերին պէտք է դադարին: Աստուծոյ հաստատածը նորից վճռել, փոփոխել, սահմանափակել և ըստ մարդկային հայեցակէտի մեկնել կարող են միայն ոչ քրիստոնեաները, այսինքն այն մարդիկ, որոնք ոչ աստուածային յայտնութիւն են ճանաչում, ոչ եկեղեցի և ոչ քրիստոնէական օրէնք, կամ այն քրիստոնեաները, որոնք այս բոլորը մոռացել են, զէպի ամեն բան սառնասրտութեամբ են վերաբերում և ամեն բանի մէջ մարդկային կարծիքների, սովորութիւնների և ձգտումներ են խառնում:

Յիշենք աստուածային օրէնքը շաբաթուայ հանգստի կամ տէրունական տօները ջերմեռանդութեամբ անցկացնելու մասին: Ծննդոց գրքի երկրորդ գլխում մենք կարդում ենք աշխարհի արարչագործութեան մասին. «Եւ օրհնեաց Աստուած զօրն եօթներորդ և սրբեաց զնա, զի ի նմա հանգեաւ յամենայն գործոց իւրոց զոր սկսաւ առնել Աստուած» (Ծննդոց գլ. Բ. 2): Այսպէս վեցօրեայ արարչագործութիւնից յետոյ եօթներորդ օրը Աստուած «Բազմոյժէց» այսինքն շաբաթուայ միւս օրերից բաժանեց, այդ օրը աւելի մօտեցաւ մարդոց և նոցա միջոց տուեց իրեն հետ մօտ հազոր-

զակցութիւնն ունենալու: Սինայական օրէնսդրութեան մէջ շաբաթը պահելու օրէնքը Աստուծոյ կողմից առանձնապէս շեշտուած է. «Յիշեա՛ սրբել զօր շաբաթու»: Մովսիսի հնգամատեանի և մարգարէների գրքերի մէջ մանրամասն կերպով բացատրուած են շաբաթը տօնելու մասին եղած օրէնքները, որոնք այդ օրը արգելում են ամեն տեսակ աշխարհային գործ և մարմնական աշխատութիւն, մինչև խի օրուայ համար կերակուր եւել: Մեզ—հոր կտակարանի որդւոցս այժմ հասկանալի է. թէ որչափով նոքա—զգայական մարդիկ կարող էին ըմբռնել, որ այս բացասական պատուէրով ճաշատէր խաչակէլին կատարեալ ազատութիւն էր տրուում այդ օրը Աստուծոյ աղօթելու, զոհաբերութիւններ անելու և աստուածային օրէնքները սովորելու: Հէնց այդ յայտնեց և մեր Տէրը, որ ոչ թէ մովսիսական օրէնքը խանգարելու էր եկել, այլ նորա ներքին, հոգեկան կողմերը լրացնելու և բացատրելու (Մատթ. Գլ. Ե. 17): Նա չափաց թէ լի օրերի գործերը կիւրակէ օրերը կատարեցէք, այլ փարիսեցիներին յանդիմանելով որ շաբաթ օրը մարմնական աշխատութիւններից հանգստանալը խիտո բառացի կերպով են հասկանում: Նաև այս պատուիրեց, որ առաջին և մեծ օրէնքը—այսինքն շաբաթ օրը սուրբ պահելը—չը մոռանալով հանգերձ, մարդիկ պէտք է ի նկատի ունենան առաջինին նմանող և երկրորդ պատուէրը, այն է պէտք է ողորմածութեան և սիրոյ գործեր կատարեն, որոնք յատուկ են աւերուական տօներին (Մարկ. Գլ. Գ. 4): Այսպէս Յիսուս իրեն հետևողներին հին կտակարանի ծառայութեան լծից ազատելով՝ նոցա միտքը աստուածային կամքը իմանալու բարձրագոյն գիտութեամբ լուսաւորեց և այդ օրէնքը կատարելու ճանապարհը ցոյց տուեց նոցա (Պաղ. Գլ. Ե. 1): Փրկի այս վարդապետութիւնը այսպէս հասկացաւ և մեկնեց հորա սուրբ եկեղեցին, որը հրամայեց տօն օրերին ժամեցգութեան անպատճառ ներկայ գտնուել, Աստուծոյ պատուէրները սովորել, ողորմածութեան և սիրոյ գործեր կատարել, նոյնպէս թոյլատրեց մերձաւորների շրջանում հանգստանալ, օրուայ սրբութիւնը չը վիրաւորելով այնպիսի զուարճութիւններով, որ քրիստոնէական խիղճը չէ խրախուսում:

Ուստի հասարակական որոշ իրաւունքներ ունեցող ոչ մի ժողով, եթէ կամենում է քրիստոնէական լինել, աստուածային օրէնսդրութեան մէջ չը պէտք է խառնուի. այսինքն չը պիտի թուլացնէ կերպարանափոխէ և մանաւանդ փոփոխէ աստուածային օրէնքները: Թէ ինչ յարաբերութիւն պէտք է ունենան աշխարհականները և եկեղեցւոյ հովիւները քրիստոնեաների կարգապահութեան վերայ հսկելու միջոցին, արդէն Պօղոս առաքեալը պարզ կերպով որոշել է. նա եկեղեցւոյ հովիւներին յաւիտեան դատապարտելու երկիւղով պարտաւորեցնում է, ժողովրդին դատաւարակել, և աշխարհականներից խնդրում է հոգեւորականներին լսել մարդոց մեղքից ազատելու գործում և միմեանց խրախուսել աստուածային օրէնքները կատարելու: «Աղաչեմ զձեզ, եղբայրք, գրում է Պօղոս առաքեալը թեսաղոնիկեցիներին, մխիթարեցէք զկարճամիտս, պատասխարան լերուք տկարաց» (Թեսս. Ա. գլ. Ե. 14): Ահա թէ իսկապէս եկեղեցին ինչ պէտք է սպասէ իշխանութիւն ունեցող քրիստոնեաներից և քաղաքական ու գիւղական կեանքի կարգապահութեան վերայ հսկող գործիչներից: Երբ առաքեալը աշխարհականներից խնդրում է քրիստոնէական պատուիրանները կատարելու ժամանակ միմեանց օգնել, նոցա չէ ասում, ստահակների, տկարների և կարճամիտների համար կարգադրութիւնների, օրէնքների և պայմաններ գրեցէք, այլ պահանջում է, որ այգպիսի մարդոց օժանդակութիւն տրուի աստուածադիր օրէնքները և կանոնները կատարելու, յանգգնաբար օրէնքները խանգարողներին խրատել, իսկ թուլութեան և կարճամտութեան պատճառով արգելքների դէմ մաքառել չը կարողացողներին մխիթարել և պաշտպանել: Իսկապէս այս է (և ոչ եկեղեցական գործերի մէջ խառնուիլը) հասարակական ժողովների քրիստոնէական պարտականութիւնը, որոնք կոչուած են հսկելու ժողովրդի կրթութեան, առողջութեան և հասարակաց բարեկարգութեան վերայ: Նոքա եկեղեցական օրէնսդրութեան մէջ խառնուելով՝ միայն ժողովրդի քրիստոնէական խիղճն են խռովում: Ժողովուրդը չէ իմանում Ասածուն լսել և կիւրակէ պահել, թէ մարդոց լսել և չը պահել որովհետեւ քրիստոնեաները պարտաւոր են հնազանդել և աշխար-

Հային իշխանութեան: Ուստի՝ առաքելական պատուէրով առաջնորդուելով՝ մենք տօների վաճառականութեան մասին օրէնքներ գրողներին կարող ենք ասել, քրիստոնեաների խիղճը ազատ թողէք, որովհետեւ նոքա պարտաւոր են առաւել Աստուծոյն Հնազանդիլ և ոչ մարդոց (Պործ. գլ. Ե. 29): Տօներին վաճառականութիւնը բոլորովին արգելելով՝ նոյա լիակատար իրաւունք տուէք Աստուծոյ կամքը կատարելու և ձեր ձեռքը միայն այն առէք, ինչ որ Աստուածային և թագաւորական բարձրագոյն իշխանութեամբ շնորհուած է ձեզ. — տկարութեան պատճառով օրէնքների գէմ մեղանշողներին խրատեցէք, թոյլերին և փոքրօգիներին ցոյց տուէք աստուածային օրէնքները կատարելու միջոցները և ճանապարհը:

Տօներին վաճառականութիւնը չը դադարեցնելու մի պատճառն էլ այն է, որ քաղաքական ժողովների գործիչները վախենում են, որ տօների վաճառականութեան մի քանի ճիւղերից ստացած օգուտներից զրկուեն:

Բայց քննադատների մտքերը այստեղ ընկնում են Հասկացողութեանց այն անելանելի տարակուսութիւնների մէջ, որոնցից մեր Տէր Յիսուս Քրիստոսը բոլորին զգուշացնում է: Նոքա յոյս ունին անվճռելին վճռել. իրենց կենսական շահերը չը մոռանալով՝ կամենում են Աստուծոյ պատուիրանները կատարած լինել Հակառակ Փրկչի խօսքերին. «Ոչ ոք կարէ երկուց տէրանց ծառայել, կամ՝ զմին ատիցէ և զմիւսն սիրիցէ, կամ՝ զմին մեծարիցէ և զմիւսն արհամարհիցէ. Ոչ կարէք Աստուծոյ ծառայել և մամոնայի» (Մատթ. գլ. 2. 26.)՝ Այս առարկայի մասին խօսելիս առաջին տեղը բռնում է ոչ թէ Աստուծոյ սէրը, այլ տօներին վաճառականութիւնը դադարեցնելուց առաջ գալիք կորստի երկիւղը. որ և ստիպում է բոլոր իրական և կարծեցեալ պատճառները և պատրուակները ի մի հաւաքել, որպէս զի շատ և ընտիր ժամեր յատկացուին վաճառականութեան և ոչ թէ Աստուծոյ օրէնքները լսելուն: Մեր Տէր Աստուածը իրեն նուիրուած օրերը սրբութեամբ պահելու համար այն խիստ օրէնքներն է տուել, որոնք մեզ ազատում են կենսական շահերը բարեգործութիւններից գերադասելուց: Տօներին թող բոլոր կենսա-

կան աշխատութիւնները և գործերը, գորա համար քեզ վեց լուր օր է տրուած, որովհետեւ սուրբ օրերին կենսական փոքրիկ աշխատութիւններ և վաճառականութիւն անելով աւելի մեծովը կը հրապուրուիս և Աստուծոյ պահանջները կը մոռանաս: Տօները խնայիլ պահել, զանազան մեկնաբանութիւններով, բացատրութիւններով աստուածային պատուէրը չը խեղաթիւրել, ահա տօն օրերին վաճառականութիւն անելու մասին տրուելիք միակ հնարաւոր վճիռը:

Թարգմ.: ***

(ԴՊՆԱՆԻՆԻ):